



- Ինչպես ասում են, «հաշիվներս» լրիվ փակել ենք 2013 թվականի հետ: Նախատեսված 48 ծրագիրն էլ լրիվությամբ իրագործվել է: Ընդ որում տարբեր ոլորտներում կատարվեցին բազմաբնույթ աշխատանքներ, այդ թվում՝ ճանապարհաշինություն, կենցաղի, ծիսակատարությունների տների կառուցում ու վերանորոգում եւ այլն:
- Եվ ոչ միայն միջհամայնքային ճանապարհների, այլեւ գյուղերի փողոցների բարեկարգումը, մասնակիորեն նաեւ դաշտամիջյան ճանապարհները, ինչպես եւ նոր կանուղիների կառուցումն ու հների նորոգումը: Ասեմ նաեւ, որ ճանապարհների նորոգման համար եւս քիչ միջոցներ չենք տրամադրում, բայց դարձյալ այդ ուղղությամբ շատ անելիքներ կան: Անցյալ տարի, օրինակ, ինչպես հարկն է նորոգվել էր շրջկենտրոնից դեպի Հեշտիա-Թորիա տանող եւ այլ ավտոճանապարհներ: Գարունը իր «գործը» արեց եւ այդ ճանապարհները դարձյալ նորոգման կարիք ունեն: Հիմա երթելությունը անհամեմատ ինտենսիվ է, տարբեր մակնիշի մեքենաներ ու տրակտորներ են անցնում, որոնք էլ իրենց հետքն են թողնում: Պակասը լրացնում են վարար անձրեւների ու ձնհալոցքի ջրերը: Դարձյալ նորոգման պետք է ենթարկվեն շրջկենտրոնից դեպի Դիլիֆ, Փոքր Խանչալի, Հեշտիա-Թորիա եւ մյուս գյուղերը տանող ճանապարհները, ինչպես նաեւ գյուղերի փողոցներն ու հարակից տարածքները: Հաշվի առնելով իրերի բուն վիճակը, միջհամայնքային ու գյուղամիջյան ճանապարհների նորոգման ու բարեկարգման համար այս տարի 120 հազար լարի էլ տեղական միջոցներից ենք հատկացրել:
- Պահանջները, իհարկե, շատ են, բայց կարելի է նաեւ ծիսակատարությունների տներ ունենալը: Ճիշտ է, նախկինում ո՞ւմ մտքով կանցնեի, թե գյուղում պետք է կառուցել հարսանքատուն կամ այլ նպատակի ծառայող շենքեր: Իսկ այսօր այդ հարցերը նույնպես առաջին պլան են մղվել: Եվ կառուցում ենք: Ծիսակատարությունների այդպիսի մի գեղեցիկ շենքի շինարարությունը ավարտվում է Սաթխա գյուղում, որին օգնության ձեռք են մեկնել նաեւ տեղի բարեգործները: Արարողությունների տներ են կառուցվում եւ կառուցվել ու շահագործման են հանձնվել Սաղամո, Կաթնատու, Ղուլալիս, Թորիա, Ուչմանա եւ մի քանի այլ բնակավայրերում: Գյուղական ծրագրով նորոգման կենթարկվեն մանկապարտեզներ, մշակույթի ու կենցաղի տներ, այլեւայլ օբյեկտներ: Վերջին հաշվով կյանքը շարժվում է, շարժվում առաջ, իր հետ բերելով նորանոր պահանջներ ու հիմնահարցեր: Չես կարող անտեսել, աչքաթող անել մարդկանց կարիքներն ու հոգսերը: Ահա այդ նկատառումներից ելնելով էլ երկրի կառավարությունը առաջ քաշեց գյուղի աջակցության ծրագիրը, որով պայմաններ են ստեղծվում բնակավայրերի զարգացման, բնակչության կենսամակարդակի բարձրացման, կյանքի պայմաններն ավելի բարեկեցիկ դարձնելու համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԿԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿՈՒՐՑՄԱՆ ԱԿՏ